

ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Ծաղկի/Կապիկի ծաղկի պատվաստանյութ (JYNNEOS™) Ի՞նչ է ձեզ անհրաժեշտ իմանալ

Many Vaccine Information Statements are available in Armenian and other languages. See www.immunize.org/vis

Պատվաստանյութի վերաբերյալ շատ տեղեկատվական նյութեր հասանելի են հայերենով և այլ լեզուներով: Տես www.immunize.org/vis կայքը

1. Ինչո՞ւ պատվաստվել:

Ծաղկի/Կապիկի ծաղկի պատվաստանյութը (JYNNEOS™) կարող է օգնել պաշտպանել ծաղկից, կապիկի ծաղկից և այլ հիվանդություններից, որոնք առաջանում են օրթոպոքավիրուսներից, այդ թվում Կովի ծաղկից:

Ծաղիկը շատ լուրջ հիվանդություն է, որն առաջանում է մարդու ծաղկից: Որոշ մարդիկ շարունակում են վիրուսով վարակվելու ռիսկի տակ գտնվել, որն առաջացնում է ծաղիկ հիվանդությունը, այդ թվում այն անձինք, ովքեր աշխատում են արտակարգ իրավիճակների պատրաստվածության պայմաններում և որոշ լաբորատորիաներում: Վիրուսը կարող է տարածվել անձից անձ՝ առաջացնելով ախտանիշներ, որոնց թվում են տենդը և մաշկի ցանը: Մարդկանց մեծ մասը, ովքեր նախկինում ծաղիկ հիվանդությունն են ունեցել, ապաքինվել են, բայց ամեն 10 անձից 3-ը մահացել են այդ հիվանդությունից:

Կապիկի ծաղիկը հազվադեպ հիվանդություն է, որն ունի ախտանիշներ, որոնք նմանատիպ են, բայց ավելի մեղմ, քան ծաղիկ հիվանդության ախտանիշները: Ամեն դեպքում, կապիկի ծաղիկը կարող է մահվան պատճառ դառնալ: Կապիկի ծաղիկն ի հայտ եկող հիվանդություն է Աֆրիկայում, և կապիկի ծաղիկ ներմուծված դեպքերի բռնկումները երբեմն տեղի են ունենում այլ երկրներում, այդ թվում նաև Միացյալ Նահանգներում:

Կովի ծաղիկ վիրուսը կարող է հիվանդություն առաջացնել, երբ մարդիկ շփվում են վարակված մարդկանց (օրինակ՝ շփումը որևէ մեկի հետ, ով վերջերս պատվաստվել է ACAM2000®-ով՝ ծաղիկ մեկ այլ տեսակի պատվաստանյութով) կամ կենդանիների հետ: Լաբորատորիաներում կովի ծաղիկ վիրուսի հետ աշխատողները կարող են պատահաբար վարակվել վիրուսով և վարակվելու դեպքում, կարող են հիվանդանալ: Ամեն դեպքում, կովի ծաղիկ վարակների մի շարք դեպքեր լավանում են ինքնուրույն՝ առանց բուժման:

2. Ծաղկի/կապիկի ծաղկի պատվաստանյութ (JYNNEOS™)

Ծաղկի/կապիկի ծաղկի պատվաստանյութը (JYNNEOS™) պատրաստվում է՝ կիրառելով կովի ծաղիկ թուլացած կենդանի վիրուսը և չի կարող առաջացնել ծաղիկ, կապիկի ծաղիկ կամ որևէ այլ վարակիչ հիվանդություն:

JYNNEOS™ պատվաստանյութը հաստատվել է Սննդի և դեղերի վարչության (Food and Drug Administration, FDA) կողմից՝ կանխարգելելու ծաղիկ և կապիկի ծաղիկ հիվանդությունը **18 տարեկան և ավելի մեծ անձանց շրջանում, ովքեր ծաղկի կամ կապիկի ծաղիկ վարակման բարձր ռիսկի տակ են:**

- CDC-ն խորհուրդ է տալիս JYNNEOS™ պատվաստանյութը որոշ լաբորատոր աշխատողների և շտապօգնության թիմի անդամների համար, ովքեր կարող են շփվել այն վիրուսների հետ, որոնք առաջացնում են օրթոպոքավիրուսի վարակներ:
- CDC-ն խորհուրդ է տալիս պատվաստանյութը դիտարկել այն մարդկանց համար, ովքեր ընդունում են ACAM2000®, կամ ովքեր խնամում են օրթոպոքավիրուսներով վարակված հիվանդներին:

JYNNEOS™ պատվաստանյութը սովորաբար ընդունում են որպես 2 ներարկումների շարք, 4 շաբաթ տարբերությամբ: Նախկինում ծաղկի պատվաստանյութ ստացած մարդիկ կարող են միայն 1 դեղաչափի կարիք ունենալ:

Խթանիչ դեղաչափերը խորհուրդ են տրվում ամեն 2 կամ 10 տարին մեկ, եթե անձը մնում է ծաղկի, կապիկի ծաղիկ կամ այլ օրթոպոքավիրուսների շարունակական ռիսկի տակ: Ձեր բժիշկը կարող է ձեզ հավելյալ տեղեկություններ տալ:

3. Զրուցեք ձեր առողջապահական խնամքի մատակարարի հետ

Ասեք ձեր պատվաստման հարցերով մատակարարին, եթե պատվաստանյութ ստացող անձը.

- Ունեցել է **ալերգիկ ռեակցիա ծաղկի պատվաստանյութի նախորդ դեղաչափից հետո**, կամ ունի որևէ **լուրջ, կյանքին սպառնացող ալերգիաներ**
- Ունի **թուլացած իմունային համակարգ**
- Հղի է կամ կարծում է, որ կարող է **հղի լինել կամ կրծքով է կերակրում**

Որոշ դեպքերում ձեր առողջապահական խնամքի մատակարարը կարող է որոշել հետաձգել JYNNEOS™ պատվաստանյութով (նախքան կոնտակտ ունենալը) ծաղկի/կապիկի ծաղկի պլանային պատվաստումը մինչև առաջիկա այցը:

Թեթև հիվանդություններ, ինչպես, օրինակ՝ մրսածություն ունեցող անձինք, կարող են պատվաստվել: Մարդիկ, ովքեր չափավոր կամ ծանր հիվանդ են, պետք է սովորաբար սպասեն մինչև ապաքինվելը՝



U.S. Department of Health and Human Services
Centers for Disease Control and Prevention

նախքան JYNNEOS™ պատվաստանյութով պլանային (նախքան կոնտակտ ունենալը) դեղաչափ ստանալը: **Եթե ձեզ խորհուրդ է տրվել ստանալ JYNNEOS™ կապիկի ծաղկի վիրուսով շփվելու պատճառով, պետք է պատվաստվեք՝ անկախ ընթացիկ հիվանդություններից, հղիությունից, կրծքով կերակրելուց կամ թուլացած իմունային համակարգից:**

JYNNEOS™ պատվաստանյութը կարող է սովորաբար տրվել մյուս պատվաստանյութերի հետ՝ առանց որևէ ժամանակային կախվածության: Ամեն դեպքում, միոկարդիտ (սրտամկանի այտուցվածություն) կոչվող հիվանդության ավելացված ռիսկի տակ գտնվող որոշ մարդիկ, այդ թվում դեռահասները, կամ երիտասարդ արական սեռի չափահասները, պետք է հաշվի առնեն 4 շաբաթ սպասելը JYNNEOS™ պատվաստանյութից հետո՝ նախքան COVID-19-ի որոշ պատվաստանյութեր ստանալը: **Եթե ձեզ խորհուրդ են տվել ստանալ JYNNEOS™ կապիկի ծաղկի վիրուսի հետ կոնտակտավոր լինելու պատճառով, պետք է պատվաստվեք, նույնիսկ եթե արդեն ստացել եք COVID-19-ի պատվաստանյութը:**

4. Պատվաստանյութից առաջացող ռեակցիաների ռիսկերը

- Կարմրությունը, ցավը, այտուցը և քորը պատվաստման հատվածում ամենատարածված երևույթներն են, որոնք տեղի են ունենում JYNNEOS™-ով պատվաստվելուց հետո:
- Ուժասպառությունը (հոգնածությունը), գլխացավը և մկանային ցավը երբեմն կարող են առաջանալ նաև JYNNEOS™ պատվաստանյութով պատվաստվելուց հետո:

Մարդիկ երբեմն ուշագնաց են լինում բուժօգործողություններից հետո՝ ներառյալ պատվաստումը: Հայտնեք ձեր բժշկին, եթե դուք թեթև գլխացավով եք զգում կամ տեսողության փոփոխություն, կամ ականջներում զնգոց եք զգում:

Ինչպես ցանկացած դեղամիջոցի դեպքում, շատ փոքր հավանականություն կա, որ պատվաստանյութը լուրջ ակերգիկ ռեակցիայի, այլ լուրջ վնասվածքի կամ մահվան պատճառ հանդիսանա:

Կարող եք գրանցվել V-safe-ում JYNNEOS™ պատվաստանյութի որևէ դեղաչափ ստանալուց հետո՝ օգտագործելով ձեր սմարթֆոնը և այցելելով [vsafe.cdc.gov](https://www.cdc.gov/vsafe): V-safe-ն անվտանգության մշտադիտարկման համակարգ է, որը ձեզ թույլ է տալիս կիսվել CDC-ի հետ, թե ինչպես եք դուք կամ ձեր մերձավորն զգում JYNNEOS™ պատվաստանյութ ստանալուց հետո: Մանրամասների համար այցելեք www.cdc.gov/vsafe:

Armenian translation provided by Immunize.org

5. Ի՞նչ տեղի կունենա լուրջ ռեակցիայի առկայության դեպքում:

Ալերգիկ ռեակցիա կարող է առաջանալ, երբ պատվաստված անձը հեռանա կլինիկայից: Եթե տեսնում եք լուրջ ալերգիկ ռեակցիայի նշաններ (եղնջատենդ, դեմքի և կոկորդի այտուցվածություն, շնչառության դժվարություն, արագ սրտխփոց, գլխապտույտ կամ թուլություն), զանգահարեք 9-1-1 և տարեք անձին մոտակա հիվանդանոց:

Ձեզ մտահոգող այլ նշանների առկայության դեպքում զանգահարեք ձեր առողջապահական խնամքի մատակարարին:

Անբարենպաստ ռեակցիաների մասին պետք է հայտնել Պատվաստանյութերի հետ կապված անբարենպաստ երևույթների հաշվետվությունների համակարգին (Vaccine Adverse Event Reporting System, VAERS): Սովորաբար այս հաշվետվությունը կներկայացնի ձեր առողջապահական խնամքի մատակարարը կամ դա կարող եք ինքնուրույն անել: Այցելեք VAERS-ի կայքէջ՝ www.vaers.hhs.gov կամ զանգահարեք 1-800-822-7967: *VAERS-ը միայն ռեակցիաների մասին հաղորդելու համար է, իսկ VAERS-ի անձնակազմի անդամները չեն տրամադրում բժշկական խորհրդատվություն:*

6. Վնասվածքների փոխհատուցման հակաքայլերի ծրագիր

Վնասվածքների փոխհատուցման հակաքայլերի ծրագիրը դաշնային ծրագիր է, որը կարող է օգնել վճարել բժշկական խնամքի դիմաց և այլ հատուկ ծախսեր այն մարդկանց համար, ովքեր լուրջ տուժել են որոշ դեղամիջոցներից կամ պատվաստանյութերից: Եթե տուժել եք ծաղկի/կապիկի ծաղկի պատվաստանյութից, կարող եք այս ծրագրի մասին ավելին իմանալ՝ այցելելով ծրագրի կայքէջ՝ www.hrsa.gov/cicp, կամ զանգահարելով 1-855-266-2427 (855-266-CICP):

7. Ինչպե՞ս կարող եմ ավելին իմանալ:

- Հարցրեք ձեր առողջապահական խնամքի մատակարարին:
- Զանգահարեք ձեր տեղական կամ նահանգային առողջապահության դեպարտամենտ:
- Այցելեք Սննդի և դեղերի վարչության (Food and Drug Administration, FDA) կայքէջ պատվաստանյութի փաթեթի ներդիրների և լրացուցիչ տեղեկությունների համար՝ www.fda.gov/vaccines-blood-biologics/vaccines:
- Կապվեք Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնների (Centers for Disease Control and Prevention, CDC) հետ՝
 - Զանգահարեք 1-800-232-4636 (1-800-CDC-INFO) կամ
 - Այցելեք CDC-ի կայքէջ՝ www.cdc.gov/poxvirus/monkeypox:

Բժշկական խնամք ապահովող(ներ)ին թույլատրելու համար պատվաստումների իրավիճակի վերաբերող ճշգրիտ տեղեկություն, պատվաստումների գնահատականներ և հետագա պատվաստումների առաջադրված գրաֆիկը, տեղեկությունները կուղարկվեն Michigan Care Improvement Registry (Միչիգանի խնամքի բարելավման գրանցման կենտրոն): Անհատներն իրավունք ունեն պահանջելու իրենց բժշկական խնամք ապահովողից, որպեսզի պատվաստումների տեղեկությունները գրանցման կենտրոն չուղարկվեն:

MDHHS-Pub-1216AR

AUTH: P. H. S., Act 42, Sect. 2126.